Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1168[5]-17.10.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29.1-ին հոդվածի՝

1) 3-րդ մասում «ուղարկվում են» բառերից հետո լրացնել ««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով կամ» բառերը.

2) 5-րդ մասում «ուղարկվում են» բառերից հետո լրացնել ««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով կամ» բառերը.

3) 11-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Ծանուցումը «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով իրականացնելու դեպքում վարչական վարույթին կցվում է հասցեատիրոջ պատշաճ ծանուցման փաստը հավաստող ապացույցը:»:

Հոդված 2. Օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի «իրականացվել» բառից հետո լրացնել «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով կամ» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից: